

## Հ. ԱՄԱՆՅԱՆ

### ՄԱԿԱՐԱՅԵՑՎՈՑ ԳՐԶԵՐԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԲՆԱԳՐԻ ՄԱՍԻՆ

Մակարայեցվոց գրքերի հայերեն թարգմանությունները իրենց լեզվաոճական կերպարանքով և թարգմանական արվեստով տարբերվում են Աստվածաշնչի մյուս գրքերից: Այդ տարբերությունը, որ ընկալվում է առանց դժվարության, ուշադրություն է գրավել և պատճառ հանդիսացել գիտական ուսումնասիրությունների համար: Աստվածաշնչի ոչ մի այլ գիրք այնպիսի հանգամանալի բանասիրական ու բնագրաբանական հետազոտության չի ենթարկվել, ինչպես Մակարայեցվոց Ա և Բ գրքերը: Ուսումնասիրությունները բացահայտել են, որ այդ գրքերը հայերեն Աստվածաշնչի՝ «թագուհի թարգմանության» մյուս գրքերի նման բարձրարժեք թարգմանություններ են՝ լեզվա-ոճական և այլ ցայտուն յուրահատկություններով հանդերձ: Մակայն Մակարայեցվոց գրքերի ուսումնասիրության մի շարք հարցեր դեռևս բավականաչափ քննված չեն և կարիք ունեն համակողմանի հետազոտության, վերանայման ու լրացման:

Գիտականորեն ճիշտ չէր լինի Մակարայեցվոց գրքերի թարգմանության հարցերը քննել Աստվածաշնչի մյուս գրքերից անկախ, մեկուսի, որովհետև դրանք, իրենց յուրահատուկ կողմերով հանդերձ, սերտորեն կապված են Աստվածաշնչի մյուս գրքերի թարգմանության հետ: Բանն այն է, որ Աստվածաշնչի հայերեն թարգմանության բնօրինակի հարցն է հիմնականում եղել հայագետների (Ա. Մերկի, Ռ. Բելկի, Ս. Լիոնեի, Պ. Էսապայանի, Ե. Դուրյանի, Ա. Կոզյանի, Ֆ. Սքրիվենների, Օ. Սեքուլայի, Ն. Ակինյանի, Ն. Ծովակաճի, Վ. Էրմոնի, Պ. Ֆետտերի, Ե. Տեգայի, Հ. Ոսկյանի, Բ. Չրաքյանի, Բ. Ջոնսոնի, Մ. Ստոունի և այլոց) ուշադրության կենտրոնում, որը տարբեր կողմերով ու բազմակի արծարծվելուց հետո էլ դեռևս ըստ ամենայնի յուսաբանված չէ և իր զանազան մեկնաբանություններում տարակարծություններ և անորոշու-

թյուններ ունի: Ընդ որում հայագետներն իրենց ապացույցների փաստական պակասներն ու եզրակացությունների թերությունները պատճառաբանող հանգամանքներից ընդգծում են հատկապես երկուսը՝ հայերեն թարգմանության օտար բնօրինակների անհայտությունն ու դրանց մասին տեղեկությունների անբավարարությունը, ապա՝ հայերեն Աստվածաշնչի գիտահամեմատական բնագրերի բացակայությունը:

Աստվածաշնչի հայերեն բնագիրը, ինչպես հաստատված է հայագիտության մեջ, թարգմանված է հունարեն յոթանասնից կոչվող խմբագրությունից: Մակայն բանասերները, հատկապես Աստվածաշնչի հայերեն թարգմանության պատմությամբ զբաղվողները, ճշում են յոթանասնից բնագրի տարբեր խմբագրական տարբերակներ՝ Պեշիտտա, Կեսարյան (պամփոյոյան), ալեքսանդրյան, որիզմյան, լուկիանյան (անտիոքյան) և այլն:

Իրոք, հայերեն թարգմանության մեջ առկա են հիշյալ բնագրային տարբերակների տարբեր: Ընդամենն այդ խմբագրությունների հետքերը Աստվածաշնչի հայերեն թարգմանության բոլոր մասերում միատեսակ բաշխված չեն, այլ տարբեր բաժնեներում ու գրքերում տարբեր դրսևորում ունեն: Դա ցույց է տալիս, որ Աստվածաշունչը մեզ անհայտ բնօրինակից հայերեն թարգմանվելով, միաժամանակ, թարգմանական աշխատանքի ընթացքում, ստուգվել է այլ բնօրինակների հետևողությամբ՝ նախքան վերջնական ճշտումներն ու սրբագրումները: Թարգմանության մեջ տարբեր բնօրինակների տարբերը հանդես են եկել, ամենայն հավանականությամբ, նաև հետագայում՝ 5-րդ դ. հետո: Սակայն, ինչպես նկատել են հայագետները, դեռևս հստակ պատկերացում չկա այն օտար բնօրինակի, յոթանասնից խմբագրության այն կոնկրետ տարբերակի մասին, որը եղել է հայ թարգմանիչների հիմնական աղբյուրը: Ավելին. առայժմ դեռ լուծված չէ այն հարցը, թե առաջին թարգմանությունից հետո հայերեն բնագիրը ստուգվել, լրացվել ու ճշտվել է մեկ (կամ ավելի) այլ բնօրինակի հիման

<sup>1</sup>Վմտ. Լ. Տեր-Պետրոսյան, Սաղմունքների հայերեն թարգմանությունը և ճրա նախօրինակը, «Էջմիածին», 1975, Ա, էջ 44:

վրա, թե ամբողջությամբ նորից է թարգմանվել, չնայած փաստերը՝ հայերեն թարգմանության մեջ տարբեր խմբագրությունների հետքերը, խոսում են ընդդեմ երկրորդ՝ նոր թարգմանության կարծիքի: Անկասկած, յոթանասնից խմբագրության բնօրինակը, որ հիմք է եղել հայերեն թարգմանության համար, եղել է մի ճշգրիտ, ընտիր օրինակ<sup>2</sup>, այլև հնագույն ու հազվագյուտ բնագիր<sup>3</sup>, որից, բնականաբար, հմուտ թարգմանիչների աշխատանքով պիտի ծնվեր, «թագուհի թարգմանությունը»:

Մակարայեցվոց գրքերի հայերեն թարգմանության համար հունարեն յոթանասնից բնագրից բացի, այլ բնօրինակ ենթադրելու համար հիմք չկա: Այդ բնօրինակից է թարգմանված ամբողջ Աստվածաշունչը: Ավելին, եթե մի շարք այլ գրքերում հանդիպում են ինչ-որ ավելի հին բնօրինակներ ակնարկող լեզվական փաստեր, գլխավորապես առերեմի հետքեր, ապա Մակարայեցվոց գրքերն ազատ են մնալ իրականություններից և ամբողջությամբ թարգմանված են հունարենից: Հ. Ս. Կոզյանը գրում է. «Դասական մատենագրության մեջ չկա թարգմանություն մը, որ այնչափ հաստատված է մատենի իր սկզբնագրին լեզուն, ինչպես Մակարայեցվոց թարգմանությունը: Ամեն քայլափոխի հայ թարգմանիչը անցնելի հետքեր դրոշմած է իր յուրաքանչյուր բնագրեմ»<sup>4</sup>:

Աստվածաշունչի հունարեն բնօրինակի մասին պատկերացումն ավելի պարզ կլինի քննական բնագրերի առկայության դեպքում: Արդեն գոյություն ունի Մակարայեցվոց գրքերի այդպիսի բնագիր և ձեռագրային փաստերը հնարավորություն են տալիս նոր խոսք ասելու առհասարակ Աստվածաշունչի հայերեն թարգմանության շատ հարցերի վերաբերյալ: Սակայն նախասկզբնական թարգմանության վերականգնումը, մինչև մյուս գրքերի գիտահամեմատական բնագրերի հանդես գալը, դեռևս կապված կլինի դժվարությունների հետ:

Մակարայեցվոց հայերեն թարգմանությունն ազատ թարգմանություն է և քառային ու ոճական զգալի տարբերություն ունի յոթանասնիցի հունարեն բնագրի հետ: Ուստի Մակարայեցվոց գրքերի ձեռագրային տարբերակները հիման վրա վերականգնված հայերեն նախասկզբնական օրինակը դեռևս հեռու կլինի հունարեն բնօրինակից, ինչ չի կարելի ենթադրել Աստվածաշունչի ճշգրիտ թարգմանված գրքերի վերականգնված բնագրի մասին: Հետևաբար Մակարայեցվոց հայերեն թարգմանության քննությունը թարգմանական արվեստի ու լեզվական հարցերի շրջանակներից դուրս, հանգում է հիմնականում մտքերի ու իմաստների համապատասխանության աստիճանը բացահայտելուն՝ հունարեն

բնագրի հետ հայերեն թարգմանության ունեցած տարբերությունների ցուցադրումով:

Մակարայեցվոց բնագրի ուսումնասիրության համար հատկապես կարևոր գիտական նշանակություն ունեն Ե. Դուրյանի բնագրաբանական աշխատությունը<sup>5</sup> և Ս. Կոզյանի վերևում հիշատակված գիրքը: Առաջինը հունարեն և հայերեն (առանձին դեպքերում նաև ֆրանսերեն և գերմաներեն) բնագրերի համեմատությանը ցույց է տալիս Մակարայեցվոց Ա և Բ գրքերի հունարեն բնագրի հետ ունեցած շեղումներն ու սխալները, երկրորդը նույնպիսի համեմատություն է կատարում միայն Մակարայեցվոց Բ գրքի համար<sup>6</sup>: Նման մանրամասն ու հետևողական համեմատության չի ենթարկվել Մակարայեցվոց Գ գիրքը, որի վերաբերյալ կամ միայն առանձին դիտողություններ<sup>7</sup>: Հիշատակված աշխատությունները հայերեն և հունարեն յոթանասնից բնագրերի քառային համեմատություններ են՝ մղտքերի ու իմաստների առաջնություններ: Հունարենի և հայերենի ճշգրիտ, շատ հաճախ բժախնդի համեմատություններով, տեղին դիտողություններով, անհրաժեշտ եզրակացություններով հանդերձ, այդ աշխատությունները, այնուամենայնիվ, գերծ չեն սկզբունքային ու փաստական սխալներից, վիրավորներից, երևույթների նկատմամբ մոտավոր ու ենթադրական դատողություններից, հետազոտության ուղղագիծ, մեխանիկական մոտեցումից: Ամենից առաջ նշելի է պատմական հայեցակետի թուլությունը: Լեզվական իմաստներն հաղորդվում ու գոյատևում են ավանդաբար՝ գրավոր ու բանավոր խոսքի միջոցով, որպես զարգացման մի որոշակի աստիճանի, համաժամանակյա վիճակի կոնկրետ արդյունքներ: Անցյալից մեզ հասածը, որը գրանցված է բնագրերում, իմաստային առումով բացարձակորեն սպառիչ չէ, այլ միայն ամբողջությունն է այն ամենի, ինչ գրի է առնվել և ավանդվել: Սակայն և՛ դրաբար ճիշտ և ընդունելի է համարվում այն, ինչ արդեն երաշխավորված է գրականությամբ և սխալ՝ ինչ շեղվում է դրանից, հաճախ առանց նկատի ունենալու բազմիմաստության, հոմանիշության, փոխաբերության և այլ երևույթների հնարավորությունները: Ե. Դուրյանը, օրինակ, **պղծութեան, անապատի** (Ա. Մակ. Ա, 57) բառակապակցության

<sup>5</sup> **Նդիշե արքեպիսկ. Դուրյան**, Ամբողջ երկեր, 2, ուսումնասիրությունք և քննադատությունք, ԼԹ, նկատողություններ և արքագրություններ Մակարայեցվոց Ա և Բ գրքերի թարգմանութեան վրայ, Երուսաղեմ, 1935, էջ 327—356:

<sup>6</sup> Գրքի սկզբում («Ազդ»-ում) հեղինակը հայտնում է, որ ինքը չի քննում Մակարայեցվոց Ա գրքի բնագիրը, որովհետև այն արդեն քննված է եղել Ա. Մարտիկյանի աշխատությամբ: Վերջինս հրապարակված չէ:

<sup>7</sup> Տե՛ս **Նդիշե արքեպիսկ. Դուրյան**, նշվ. աշխ., 2, Ի. նկատողություն մը Մակարայեցվոց Գ գրքին սխալ մեկ թարգմանութեան մասին, էջ 359—362:

<sup>2</sup> Հմտ. Հ. Ս. Կոզյան, Մակարայեցվոց Բ գրքին հայերեն թարգմանությունը, Վիեննա, 1923, էջ 72:

<sup>3</sup> Հմտ. Հ. Մ. Չամչյան, Պատմություն հայոց, հատ. Ա, Վենետիկ, 1784, էջ 522:

<sup>4</sup> Հ. Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 25:

դիմաց որպես ճշգրտում դնում է պղծութեան անբաժնի, *ἐργασίας* բառերը<sup>8</sup>։ Հունարեն *ἐργασία* (εω-) բառը ճիշտ է թարգմանված. հայերեն անապատ բառը բազմիմաստ է և նշանակում է «ամայի, անջին, անբնակ» և այլն<sup>9</sup>, նաև՝ «կործանված, ավերված, հողին հավասարեցված» և այլն<sup>10</sup>։ Իսկ ոճի (և հատկապես Մակարայեցվոց գրքի թարգմանության ոճի) տեսակետից անապատ բազմիմաստ բառն այդ կապակցության մեջ տեղին է և ավելի հարմար, քան անբաժնի բառը։ Ս. Կոզյանը սխալ է համարում հունարեն *ἐργασία* բառի «ստորին ինչ մտցել ի դաշինս անդր» հայերեն թարգմանությունը։ Հունարեն այդ բառը «դաշինքը լուծել, ի չիք համարել, չեղյալ հայտարարել», նաև՝ «մերժել» իմաստներից բացի, նշանակում է նաև «անհամաձայնություն հայտնել, չհամաձայնել»<sup>11</sup>։ Հայերեն թարգմանության այդ հատվածը ոչ թե ուղղակի իմաստով նշանակում է «դաշինքի մեջ ստեղծել» այլ, որ «դաշինքը ստեղծելու գալիս», «դաշինքը կեղծ է լինելու» և այլն, մասնավորապես բառակապակցության իմաստը ամբողջ մախադասության մեջ պարզ է, ճիշտ և չի կարող շեղում համարվել հունական իմաստից։

Վերոհիշյալ հեղինակների բնագրաբանական աշխատանքը Մակարայեցվոց բնագրի վերաբերյալ հիմնական կողմերով հանգում է հետևյալին. ա) սխալ թարգմանված բառերի, դարձվածների ու քերականական ձևերի ճշգրտում, ուղղում, բ) ճիշտ թարգմանությունների մասնակի սրբագրում, բարելավում, թարգմանելի միակողմների հարմար ու խիստ համապատասխան հայերեն համարժեքների ընտրություն, գ) աղավաղումների, շփոթումների ու գրչագրական սխալների բացահայտում և ուղղում, դ) հայերեն թարգմանության մեջ ավելացումների, կրկնությունների, ոճական պարզումների ու արվեստականությունն ստեղծող միջոցների բացահայտում։ Նշելի է, որ Ե. արքեպիսկ. Դուրյանի, Հ. Ս. Կոզյանի, նաև Ի. Ա. Բագրատունու կողմից նկատված սխալներն ու շեղումները, ինչպես ցույց է տալիս ձեռագրերի համեմատական ուսումնասիրությունը, ամբողջությամբ հայ թարգմանիչներին ու գրիչներին չի կարելի վերագրել։ Դրանք զգալի չափով զալիս են մեզ անհայտ հունարեն բնօրինակից։ Այս հանգամանքը պետք է նկատի ունենալ Մակարայեցվոց բնագրային վիճակը և թարգմանիչների աշխատանքը քննելիս։

Հայերեն թարգմանությունը հունարեն բնագրի հետ համեմատելիս չպետք է մոռանալ, որ այդ բնագրերը ծագում են տարբեր բնօրինակներից, որ

դրանք ծամանակի ընթացքում ենթարկվել են սրբագրական, խմբագրական ու գրչագրական բնույթի զանազան փոփոխությունների։ Հայերեն թարգմանությունը խստությամբ հունարեն բնագրով չափելը զգալիորեն խտրորում է պատմական մոտեցման սկզբունքից։ Ուստի վերևում հիշատակված բնագրաբանական աշխատություններին պետք է մոտենալ քննադատաբար, և նրանց մեջ այն ամենը, որ նույնիսկ միանգամայն ճիշտ է ըստ հունարենի, չպետք է անվերապահորեն ընդունվի որպես հայերեն թարգմանության ուղղում կամ լրացում։ Այդ ուղղումների ու ճշգրտումների հետ առավել ևս ուշադիր և զգուշ-ախոր պետք է լինել ձեռագրերի համեմատությամբ հայերեն մախադասական բնագրի վերականգնման և գիտահամեմատական բնագիր կազմելու համար հիմք օրինակի ընտրության գործում։

Մակարայեցվոց հայերեն թարգմանությունը մեզ հասել է ամբողջությամբ և իր ծավալով համապատասխանում է հունարենին, բացառությամբ Ա. գրքի Դ. գլխի սկզբի հատվածից. հունարեն բնագրի 1—8 տներն ամբողջությամբ չկան հայերենում, որտեղ և առաջին տունն սկսվում է 10 թվահամարով։ Հայերեն ոչ մի ձեռագրում չի պահպանվել այդ հատվածը, որը հավանաբար չի եղել հայերեն թարգմանության հունարեն բնօրինակում։ Դա ևս վկայում է, որ հայերենը թարգմանվել է մեզ հասցնող հունարեն, լատիներեն և այլ բնագրերից տարբեր մի բնօրինակից։ Հայերեն թարգմանության մյուս շեղումները հունարեն յոթանասնից բնագրից անընշան, այլև արտաքին, ձևական տարբերություններ են, ինչպես՝ մախադարյունները, գլխացանկերը, որոնք չկան հունարենում, որոշ գլուխներում (Ա. Մակ. Ա, Դ, ԺԲ, ԺԳ, Բ, Մակ. Բ, ԺԲ, ԺԵ, Գ. Մակ. Ա—Է) տների քանակի տարբերությունը և այլն։

Այն կարծիքը գոյություն ունի, թե Մակարայեցվոց գիրքը մեզ հասել է հիմնականում մախադասական թարգմանությամբ, գրեթե առանց փոփոխությունների։ Ս. Կոզյանը գտնում է, որ «...Մակարայեցվոց գրքերը սրբագիր ձեռք մը չեն տեսած երբեք, այլ ինչպես որ առաջին ու բուն թարգմանիչն թույլ են ելած են, այնպես ալ—իրենց բոլոր թերություններով—մեզի հասած են...»<sup>12</sup>։ Դա նկատի չունի թարգմանությունից հետո կատարված սրբագրումները, որոնք առանց փաստարկման, բայց վստահորեն վերագրում է թարգմանիչին, ասելով, թե «...թարգմանիչն կրկին թարգմանությունները, անձնական սրբագրությունները, զանոնք մա լուսանցքին վրայ գուցե նշանակած էր և որոնք լետոյ գրչագիրներն բուն մարմնոյ մէջ հիստուն են, յայտնանդիման կը ցուցանեն, թէ Մակարայեցվոց գրքերն իրենց սկզբնական կերպարանքը, զոր իրենց թարգմանիչն կը պարտէին, անփոփոխ պահած են։ Այդ նկարագրական երևույթն այնու ծագած է, որ հայ թարգմանիչը չէ կրցած յաճախ յունարեն բառին

<sup>8</sup> Տե՛ս Եղիշե արքեպիսկ. Դուրյան, նշվ. աշխ., էջ 330։

<sup>9</sup> Տե՛ս Հր. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հատ. Ա, Երևան, 1971։

<sup>10</sup> Տե՛ս Էդ. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, հատ. Ա, Երևան, 1976։

<sup>11</sup> Տե՛ս Н. Х. Дворецкий. Древнегреческо-русский словарь, т. 1, М., 1958։

<sup>12</sup> Հ. Ս. Կոզյան, նշվ. աշխ., էջ 7։

զանազան իմաստներեն յարմարագույնն ընտրել և զամենքը միանգամայն յիշած է, կամ առաջին թարգմանությունեն դժգոհ՝ երկրորդ մը կցած է իբրև անկի ուղիղ և համաձայն սկզբնագրին»<sup>13</sup>։ Իր այս տեսակետը հաստատելու համար հեղինակը քննարկական փաստերի չի դիմում, չի համոզում, որ, իրոք, Մակաբայեցվոց գրքի սրբագրումները պատկանում են թարգմանչին, ապա՝ որ նա կատարել է մի երկրորդ թարգմանություն։ Մինչդեռ ձեռագրային

փաստերը ցույց են տալիս, որ Մակաբայեցվոց նախասկզբնական թարգմանությունը ենթարկվել է զգալի փոփոխությունների հետագայում, ավելի ուշ ժամանակներում էլ, տարբեր անձանց կողմից։

Մակաբայեցվոց գրքի հայերեն թարգմանությունը մեզ հասել է չորս հիմնական խմբագրական տարբերակներով։ Ահավասիկ այդ տարբերակներից երկուսն ըստ ձեռագրերի և Հ. Զոհրապյանի հրատարակած օրինակի համապատասխան հատվածների.

#### Զոհրապ. տպ. և խմբակից ձեռագրեր

(Ս. Մակ. Ա, 9)

Յետ նորա զատեալ հաստատեցան կացին յիւրաքանչիւր տէրութեան... (ձեռ. B<sub>4</sub>C<sub>128</sub>D<sub>38</sub>E<sub>0</sub>G<sub>90</sub>H<sub>2</sub>I<sub>3</sub>...) <sup>14</sup>.

#### Այլ խմբի ձեռագրեր

Հաստատեցան կացին յիւրաքանչիւր տէրութեան... (ձեռ. C<sub>56</sub>E<sub>34</sub>F<sub>56</sub>G<sub>35</sub>H<sub>3</sub>...)

(Ս. Մակ. Է 20)

և եղ զաշխարհն ի ձեռն Յակիմայ և եթող առ Յակիմայ զորս բազումս օգնական մմա... (ձեռ. B<sub>4</sub>C<sub>125</sub>D<sub>38</sub>F<sub>7</sub>...)

և եղ զաշխարհն ի ձեռն Յակիմայ զորս բազումս օգնական մմա ... (ձեռ. R<sub>3</sub>T<sub>4</sub>V<sub>6</sub>)

(Ս. Մակ. ԺԵ, 86)

...և զամենայն պատրաստութիւն զոր ետես սպասուց նորա... (ձեռ. K<sub>7</sub>M<sub>3</sub>V<sub>7</sub>...)

...և զամենայն պատրաստութիւն սպասուց նորա զոր ետես (ձեռ. B<sub>4</sub>C<sub>125</sub>D<sub>38</sub>F<sub>7</sub>...)

(Բ Մակ. Ա, 1)

Առ եղբարս հրեաստանեայս, որ ի կողմանս եգիպտացւոցդ են, յեղբարց հրէից՝ յերուսաղեմացւոց, և եղբարց հրեաստանեայց առ ձեզ ողջոյն. խաղաղութեամբ բազմաւ. (ձեռ. C<sub>56</sub>D<sub>8</sub>E<sub>24</sub>F<sub>56</sub>G<sub>35</sub>I<sub>3</sub>...)

Առ եղբարս հրեաստանեայս, որ ի կողմանս եգիպտացւոցդ են, յեղբարց հրէից ողջոյն խաղաղութեամբ բազմաւ (ձեռ. B<sub>4</sub>C<sub>128</sub>D<sub>3</sub>E<sub>0</sub>G<sub>90</sub>...)

(Բ Մակ. ԺԵ, 84)

Այլ ամենեքին յերկինս օրհնէին զերեւելին աստուած... (ձեռ. B<sub>4</sub>C<sub>125</sub>D<sub>38</sub>E<sub>240</sub>...)

Այլ ամենեքին յերկինս օրհնէին զբարձրեայն աստուած... (ձեռ... C<sub>6</sub>G<sub>15</sub>H<sub>4</sub>J<sub>6</sub>K<sub>6</sub>N<sub>6</sub>O<sub>9</sub>...)

(Գ Մակ. Ա, 8)

...Եւ եթէ ինչ յաղթութեան հմարս գտանել մարթացեն... (ձեռ... C<sub>15</sub>D<sub>68</sub>E<sub>2</sub>F<sub>56</sub>G<sub>13</sub>...)

...Թերևս յաղթութեան հմարս ինչ մարթացեն գտանել... (ձեռ. B<sub>4</sub>C<sub>2</sub>D<sub>3</sub>E<sub>40</sub>G<sub>0</sub>I<sub>3</sub>...)

Բերված օրինակները, որոնց թիվը դժվար չէ բազմապատկել, հաշվի չառնելով այլևս փոքր, բայց դարձյալ խմբագրական բնույթի բազմաթիվ տարբերակները, ցույց են տալիս, որ Մակաբայեցվոց գրքի թարգմանությունը, իրոք, խմբագրական ու սրբագրական բազմապիսի փոփոխություններ է կրել։ Այդ բանը ակնառու կերպով ցույց են տալիս նաև զոհրապյան Աստվածաշնչի էջատակի տարբերակները։

Արդ՝ դառնալով Հ. Ս. Կոզյանի այն մտքին, թե Մակաբայեցվոց գրքի թարգմանիչն է կատարել բոլոր սրբագրումները, պետք է ասել, որ իրոք, անհայտ թարգմանիչը, ինչպես և թարգմանություն կասարող ամեն մի հեղինակ, բնականաբար պիտի անդրադառնար իր աշխատանքին, ճշգրտումներ ու

լրացումներ կատարել և հավանաբար կատարել է։ Սակայն խնդիրն այն է, թե Մակաբայեցվոց մեզ հասած բնագրի ուղղումներն ու սրբագրումները միայն թարգմանիչին են, թե դրանք, թեկուզ մասամբ, հանդես են եկել հետագայում։ Ձեռագրերի ուսումնասիրությունը, մասնավորապես տարբերակների բնույթն ու ժամանակագրական բաշխումը, ցույց է տալիս, որ խմբագրումների ու սրբագրումների մեծ մասը կատարվել է 5-րդ դ. հետո, ընդհուպ մինչև 18-րդ դարը։ Հնագույն՝ 12—14-րդ դդ. գրված ձեռագրերը տալիս են տարբերությունների հիմնական մասը, ապա՝ մինչև 18-րդ դ. ձեռագրերն ընդօրինակվում են գրեթե նույնությամբ, իսկ 16—17-րդ դդ. ձեռագրերում (K<sub>678</sub>L<sub>2</sub>M<sub>20</sub>N<sub>6</sub>O<sub>370</sub>P<sub>30</sub>R<sub>1</sub>T<sub>30</sub> և այլն) հանդես են գալիս նոր սրբագրումներ, որոնք չունեն նախորդ դարերի սրբագրումների կարևորությունը։ Կարևորն այն է, որ նախ հասակ երևում է բնագրերում տեղի ունեցող փոփոխությունների բնույթը՝ ապա՝ որ այդ փոփոխությունները հիմնականում բաժին են ընկնում 12—14 և 16—17-րդ դդ., երբ ուժեղանում է ուշադրությունն Աստվածաշնչի բնագրի ուղղությանը։ Նույնիսկ բնագրի

<sup>13</sup> Նույն տեղում, էջ 8—9։

<sup>14</sup> Լատինական տատերով նշանակված ձեռագրերի թվահամարները տե՛ս Ա. Զեյթունյան, Աստվածաշնչի հայերեն թարգմանության ձեռագրային միավորների դասակարգման մասին. «Բանբեր մահեմադարանի» № 12, Երևան, 1977, էջ 299—304։

բուն բովանդակության հետ կապ չունեցող ավելացումները՝ նախադրությունները, գլխացանկերը, այլև գլխակարգումը, տնտեսումն ու այլ պարագայներ ցույց են տալիս, որ Աստվածաշունչը ոչ թե տառացիորեն է ընդօրինակվել, այլ անընդհատ ստուգվել է, սրբագրվել տարբեր անձանց կողմից։

Նշելի է, սակայն, որ եթե 13—14-րդ դդ., մասնավորապես լատինական բնագրի հետ ստուգումներն ու սրբագրումները մեծ մասամբ վերաբերում են բնագրի արտաքին կողմին, գլխավորապես գլխակարգմանը, ապա 16—17-րդ դդ. սրբագրումներ են կատարվել նաև բուն բնագրում։ Վուլգատայի հետևողությամբ կատարված այդ սրբագրումները, որոնք հաճախ աղավաղում են հայերեն ձեռագրերով ավանդված ընթերցվածները բնագրում, լրացուցիչ տեղեկություններ են տալիս լուսանցքներում, այնուամենայնիվ, վճռական նշանակություն չունեն և հայերեն բնագիրը հիմնականում պահպանում է իր ավանդական կերպարանը։ Հնագույն 5—8-րդ դդ. գրված ձեռագրերի քաջակալությունը թույլ չի տալիս հավատի ու լիարժեք պատասխաններ տալու Աստվածաշունչի, մասնավորապես Մակարայեցվոց գրքերի բանասիրական ու բնագրաբանական շատ հարցերի, այդ թվում նաև այն հարցին, թե արդյո՞ք Մակարայեցվոց թարգմանիչն իր թարգմանածը ստուգել ու սրբագրել է մեկ այլ բնօրինակի հետևողությամբ, և եթե նա այդ արել է, ապա ինչ բնույթի են եղել նրա սրբագրումները և դրանցից որոնք են, որ այսօր պահպանված են մեզ հասած ձեռագրերում։

Համեմատության միջոցով պարզված են Մակարայեցվոց գրքերի գրչագրերի հիմնական խմբերը, որոնք ներկայացնում են բնագրի տարբեր խմբագրություններ, ավելի ճիշտ (բանասիրության մեջ՝ խմբագրություն տերմինի անորոշության պատճառով)՝ բնագրային տարբերակներ։ Դրանք որոշակի կերպով միտում են դեպի տարբեր բնօրինակներ, որոնցից մեկը հիմք ընդունելով՝ թարգմանիչը սխալները պետք է որ օգտագործած լինի որպես օժանդակ աղբյուրներ, կամ էլ՝ նախակրթական թարգմանությունը այդ օժանդակ բնօրինակների հիման վրա ստուգվել է հետագա անձանց կողմից։ Համեմատյալ դեպք, բնագրային տարբերակները հազիվ թե հետագայում կատարված փոփոխությունների արդյունք լինեն, այլ դրանք գոյություն ունեցել են, հավանաբար, դեռևս թարգմանությունների շրջանում, իսկ ուշ ժամանակներում կատարված սրբագրումները էականորեն չեն խորացել բնագրերի տարբերությունները։

Ամբողջական բնագրերից բացի պահպանվել է Մակարայեցվոց գրքի բնագրի մի համառոտ շարադրանք՝ Վենետիկի № 280 (Jc) ձեռագրով, գրված 1418—1422 թվականներին<sup>15</sup>։ Համառոտ է Մա-

կարայեցվոց Բ գիրքը նաև Երևանի Մատենադարանի № 178 (As) ձեռագրում (1253—1255 թթ.)։ Բնագրի համառոտ շարադրանքը պատկանում է Հակոբ Դրիմեցու գրչին<sup>16</sup>։

Աստվածաշունչի գրքերին առընթեր նախադրություններն ու գլխացանկերը չեն հանդիպում հայերեն հնագույն ձեռագրերում։ Դրանց հեղինակի ու գրության ժամանակի մասին նույնպես տարակարծություններ կան։ Ա. Բագրատունին հավատում է, թե Նոր Կտակարանի գրքերի նախադրություններ կան նաև հունարեն<sup>17</sup>, այսինքն դրանք հին ծագում ունեն։ Մ. Տեր-Մովսիսյանը գտնում է, որ բոլոր նախադրություններն ու գլխացանկերը բնագրերին ավելացվել են հետագայում և ոչ թե առաջին թարգմանության ժամանակ<sup>18</sup>, դրանք ունեն ընդհանուր միատեսակ պլան և ըստ ոճի ու լեզվի կարող են վերագրվել մնացում մի հեղինակի<sup>19</sup>։ Հիշատակելով Ն. Բյուզանդացու կարծիքն այն մասին, թե նախադրություններն ու գլխացանկերը Ս. Գրոց գրքերի հետ միաժամանակ թարգմանվել են 5-րդ դ. ասորերենից կամ հունարենից<sup>20</sup>, Մ. Տեր-Մովսիսյանն ասում է, որ «Դրանք երբեք թարգմանված չեն եղել, այլ հանդիսանում են 18-րդ դ. ասորեն եպիսկոպոս Գևորգ Ալևտացու բնօրինակ ստեղծագործություն (оригинальное произведение)»<sup>21</sup>։ Այդ կարծիքին համաձայն է Բ. Կյուլեներյանը՝ «Բայց, գրում է նա, —Սկևտացուն աշխատութիւններում մէջ ամենէն հետաքրքրականն ու ուշագրան է հայերէն Աստուածաշունչի գիրքերում սկիզբները դրուած նախադրութիւնք և գլխակարգութիւնք»<sup>22</sup>։ Այնուհետև նա քաջատրում է, թե դրանք Գևորգ Ալևտացին որպես ուսումնասիրություններ չի գրել, այլ մշակել է դասախոսությունների համար<sup>23</sup>։ Նա միաժամանակ վերոհիշյալ նյութերի և «Հաւաքումն մեկնութեանց երթանցունց թղթոցն կաթողիկեանց» (ձեռ. № 50, 1178 թ., Անկյուրիայի Կարմիր Վանքի) նախադրությունների միջև։ Այդ թղթերը, նախադրություններով հանդերձ, թարգմանված են հունարենից<sup>24</sup>։ Բնականաբար միտք է ծագում, թե նախադրությունները (նաև ցանկերը) գոյություն են ունե-

<sup>16</sup> Տե՛ս Բ. Վ. (Կարապետ վարդապետ, Կարապետ վ. Տեր-Մկրտչյան), Աստուածաշունչի նոր հրատարակությունը. «Արարատ», 1902, էջ 1082—1083։

<sup>17</sup> Հ. Ա. Բագրատունի, Յաղագս Աստուածաշունչ՝ գրոց. «Բազմավեպ», 1966, էջ 349։

<sup>18</sup> Տե՛ս М. Тер-Мовсесян, История перевода Библии на армянский язык, Петербург, 1902, стр. 206։

<sup>19</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 269։

<sup>20</sup> Տե՛ս նույն տեղում։

<sup>21</sup> Նույն տեղում, էջ 270։

<sup>22</sup> Բ. Կյուլեներյան (ստորագրված՝ Բարզեն եպիսկոպոս), Նախադրութիւնք Ս. Գրոց և Գևորգ Լամբրոնացի կամ Սկևտացի. «Հանդէս ամսօրեայ», 1915, էջ 72։

<sup>23</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 72—73։

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղում, էջ 73։

<sup>15</sup> Ձեռագրի նկարագրությունը տե՛ս Հ. Բ. Սարգսյան, Մայր ցուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց Ի վենետիկ, հատ. 1, վենետիկ, 1914, էջ 106—107։

ցել 13-րդ դարից էլ առաջ, թարգմանվել են հունարենից կամ գրվել Կաթողիկոս թղթերի մախաղութությունների մեմանությամբ: Սակայն մեծ են թաղարությունը փաստերի խիստ կարիք ունի: Հունարեն Աստվածաշունչը չունի մախաղութություններ և զբաղացանքներ, իսկ հայ մատենագրության մեջ էլ այդ նյութերից մինչև 13-րդ դարը ոչինչ չի հանդիպում: Գուցե Գևորգ Սկևռացին որպես օրինակ աչքի առաջ ունեցել է Կաթողիկոս թղթերի մախաղութությունները և մեծ գրվածքներ հայերեն Աստվածաշունչի համար ստեղծել է սեփական աշխատանքով: Կիլիկյան շրջանից են սկսվում ման Աստվածաշունչի գրքերի գլխակարգումն ըստ լատինական բնագրի. ձեռագրերի լուսանցքներում գլուխների սկիզբը նշվում է **Ք** կամ **Փ** համատոտագրերով, որոնք նշանակում են **Փռանգաց** (**Փռան լաց**) և դրանց դիմաց կամ ներքևում գրվում է տվյալ գլխի թվաճաճարը: Այդ գլխակարգումը հետագայում սրբապատվել է լատինական ուրիշ բնագրերի համեմատությամբ:

Տնտեսումը կատարվել է 17-րդ դ. Ղազար Բաբերդցու կողմից՝ հունարենն ու լատիներենն տնտեսմանը համապատասխան<sup>25</sup>: Ղազար Բաբերդցին չի գլխակարգել և տնտեսել Մակաբայեցվոց Գ գիրքը, որովհետև այն առհասարակ, որպես անկանոն գիրք, չի եղել նրա օգտագործած լատինական բնագրում: Այդ գիրքն այդպես էլ, առանց գլխակարգման ու տնտեսման, մնացել է հայերեն առաջին տպագիր Աստվածաշունչում, որովհետև տպագրիչը՝ Ոսկան Երևանցին, նույնպես օգտվել է լատինական բնագրից, որը չի ունեցել Մակաբայեցվոց Գ գիրքը: Այդ մասին մա գրքի վերջում՝ «Առ ընթերցողս» (էջ 881—884) վերջաբանում գրում է. «Սակայն երրորդ գիրք Մակաբայեցվոցն սակս առ նոսա ոչ գողոյն»՝ ես ևս ըստ մերոյն որպես էր եղեալ՝ թարգմտել և համարող եղի»<sup>26</sup>: Տրվում է ման մի համատոտ պարզաբանում. «Բայց երրորդ Մակաբայեցիքն, որ ոչ գոյ լատինացւոց, ոչ տնտեսեաց, քանզի գցանգըն եղեալ ենք ի մէջ բնաբանին գլխաճամար ոչ են կարգեալ զի ընդ ցանգոյն համեմատեալ տնտեսեալ էաք, թէ լալ թէ վատ, վասն այնորիկ՝ այնպէս անգոյնս և անհամար տպեցաք»<sup>27</sup>:

Մակաբայեցվոց Գ գրքի գլխակարգումն ու տնտեսումն առաջին անգամ կատարել է Մխիթար Սեբաստացին՝ Աստվածաշունչի իր կազմած ու մշակած բնագրում, հետևելով լատինական այնպիսի բնագրերի, որոնք անձանոթ են եղել Ղազար Բաբերդցուն և Ոսկան Երևանցուն: Իր հրատարակած Աստվածաշունչի վերջում՝ «Բան առ ընթերցողս և յիշատակարան մատենիս» (էջ 1271—1279), Մխիթար Սեբաստացին գրում է. «Եւ զայնց, զորոց աւէ գոյ

ի մեզ՝ որք ոչ են ի լատինս, գիտելի է, զի որքան առ երրորդ գիրս Մակաբայեցւոց, զորմէ աւէ ոչ գոյ ի լատինս, յիրաւի ոչ գոյ ի լատինացն օրինակս, բայց ի լատինս գոյ, որոց ինքն (Ոսկան Երևանցին—Ն. Ա.) ոչ է հանդիպեալ որպէս զի և զայն ըստ գլխակարգիցեր: Սակայն մեք ի լատին օրինակս տեսաք զայն հանդերձ գլխօք իւրովք եղեալ, վասն որոյ և գլխակարգեցաք: Թէպէտ այս գիրք ոչ է կանոնական որպէս և ոչ չորրորդ Եզրասն և երրորդ Եզրասն, որ ի մեզ առաջին դին»<sup>28</sup>:

Մակաբայեցվոց Գ գրքի հայերեն բնագրի տնտեսումը, խիստ կերպով տարբերվում է հունական օրինակի տնտեսումից. ուշադրություն է դարձված մտքերն ամբողջական ձևով պաշմանականորեն հատույթավորելուն: Այդ պատճառով էլ տնտեսումով լատիներենին հետևող հայերեն բնագրում հունական համեմատությամբ ավելի քիչ է տնտեսի քանակը, ըստ գլուխների համապատասխանաբար հավասար է. Ա՝ 29, 14, Բ՝ 83, 17, Գ՝ 30, 19, Դ՝ 21, 16, Ե՝ 51, 28, Զ՝ 41, 29, Է՝ 28, 15<sup>29</sup>:

Նշենք ի դեպ, որ Մակաբայեցվոց Գ գրքի գլխակարգումն ու տնտեսումը, մյուս գրքերի համեմատությամբ, ավելի ուշ շրջանում կատարելը պատահական չէ և պաշմանավորված է բանասերների՝ այդ գրքի նկատմամբ ունեցած վերաբերմունքով: Բանն այն է, որ այդ գիրքը բովանդակությամբ հեռու է Մակաբայեցիների պատմությունից և տալիս է դրանից շուրջ կես դար առաջ տեղի ունեցած իրադարձությունների նկարագիրը՝ ըստ էության դառնալով Մակաբայեցիների մախաղատություն:

Հաջգետների, գլխավորապես Աստվածաշունչի թարգմանության պատմությամբ և բնագրաբանությամբ զբաղվող մասնագետների համար միշտ էլ ուշադրության առարկա է եղել Մակաբայեցվոց գրքի թարգմանության որպիսությունը, լեզվա-ոճական վիճակը: Արդեն նշվել է, որ հայ բանասիրության մեջ Մակաբայեցվոց գրքի թարգմանությունը ճանաչվել է որպես ազատ թարգմանություն, որ դրա թարգմանիչը լավ հունարենագետ չէ, բայց լավ հայերենագետ է և այլն: Հարկ չկա այստեղ հանգամանորեն քննելու Մակաբայեցվոց գրքի թարգմանությունը դասական հայերենով գրված մյուս երկերից տարբերող բառագիտական, քերականական ու ոճական բոլոր երևույթները, որոնց մասին արդեն խոսված է Ե. արքեպ. Դուրյանի, Ն. Ա. Կոզյանի և այլ հեղինակների աշխատություններում: Թարգմանության աչքի ընկնող տարբերություններն ու թերությունները հանգում են հետևյալին.

1. Բառիմաստի սխալ, մոտավոր, ման կանխածելի

<sup>25</sup> Ղազար Բաբերդցու կողմից տնտեսված բնագրի գրչագիրը պահվում է Երևանի Մատենադարանում 351 թվաճամարի տակ: Ձեռագիրը (Ls) գրված է Իդովում, 1619 թվականին:

<sup>26</sup> Աստուածաշունչ Հնոց և Նորոց Կտակարանաց, Ամստերդամ, 1966, էջ 882:

<sup>27</sup> Նույն տեղում:

<sup>28</sup> Աստուածաշունչ գիրք Հնոց և Նորոց Կտակարանաց, Վենետիկ, 1783, էջ 1271:

<sup>29</sup> Ոսկանյան Աստվածաշունչի բնագրի տնտեսման, գլխակարգման, լուսանցագրությունների և այլ արտաքին հանգամանքների մասին տե՛ս Ս. Զոհանջյան, Հեթում Բ-ի ձեռագիր Աստվածաշունչը և ոսկանյան հրատարակությունը. «Էջմիածին», 1966, № 11, էջ 98—129:

թարգմանություն, բազմիմաստությունների շփոթում, հոմանիշների ու վերադիրների առատություն և այլն (տե՛ս օրինակ՝ Ա Մակ. Ա, 15, 24, 57, 67, Բ, 12, 18, 87, 41, 67, Գ, 1, 16, 35, 41, 45, 47, Դ, 38, 48, 52, Ե, 5, 8, 13, 37, 42, 43, Զ, 15, 30, 34, 53, Է, 1, 5, 35, Ը, 15, Թ, 8, 23, 28, 33, 42, 43, 47, 55, Ժ, 30, 39, 41, 44, 82, ԺԱ, 20, 46, 63, ԺԲ, 5, 10, 37, 48, ԺԳ, 27, 82, 87, 89, ԺԴ, 9, 22, ԺԵ, 25, 38, ԺԶ, 3, 10, 16, Բ Մակ. Ա, 2, 11, 12, 13, 14, 34, Բ, 12, 13, 14, 22, 23, Գ, 21, 23, 28, 34, Դ, 1, 3, 18, 18, 28, 34, 40, 46, Ե, 1, 8, 10, 14, 24, Զ, 19, Է, 6, 9, 21, 36, Ը, 9, 14, 27, Թ, 1, 24, Ժ, 6, 8, 15, 16, ԺԱ, 1, 11, 14, 16, 30, 34, ԺԲ, 1, 5, 21, 24, 35, 39, ԺԳ, 1, 5, 8, 15, 24, ԺԴ, 4, 17, 25, 29, 30, 44, ԺԵ, 4, 7, 17, 31, 33 և այլն):

2. Հատուկ անունների ոչ ճշգրիտ, սխալ թարգմանություններ և տառադարձումներ (Ա Մակ. Բ, 3, 26, Գ, 2, 24, Դ, 35, Ե, 18, 26, 35, Զ, 1, 2, 43, 51, Է, 5, 39, Ը, 5, 8, Թ, 4, 36, 37, 50, Ժ, 1, 6, 7, 9, ԺԱ, 70, ԺԲ, 30, 38, ԺԳ, 13, 43, ԺԴ, 2, 27, ԺԵ, 22, 28, ԺԶ, 15, Բ Մակ. Ա, 13, Գ, 4, 11, Դ, 19, Ե, 2, 24, Զ, 2, 8, Ժ, 12, ԺԱ, 29, ԺԲ, 2, 13, 17, 38, ԺԳ, 3 և այլն):

3. Քերականական անճշտություններ, շփոթումներ, բնական անմիօրինակություն, մանվածապատություն, խրթնաբանություն (Ա Մակ. Ա, 37, 85, Բ, 46, 52, Գ, 29, Դ, 20, 53, 59, Ե, 9, 61, 65, Զ, 2, 24, Է, 4, 41, Ը, 7, Թ, 27, 35, Ժ, 2, 4, 15, 32, 47, 72, ԺԱ, 37, 39, 55, ԺԲ, 11, 16, 25, ԺԳ, 32, 49, ԺԴ, 26, 45, ԺԵ, 7, 31, 32, Բ Մակ. Ա, 11, 13, 15, 35, Բ, 1, 13, 18, 21, 28, 29, Գ, 1, 6, 8, 21, 30, 33, 34, 39, 43, Դ, 11, 21, 38, 49, 50, Ե, 3, 6, 14, 16, Զ, 7, 13, Է, 8, 21, Ը, 6, 11, 30, Թ, 4, 14, 21, 24, 25, Ժ, 3, 15, ԺԱ, 1, 11, 24, 26, 30, ԺԲ, 22, 24, 36, 40, 43, ԺԳ, 8, 18, 22, 38, ԺԴ, 5, 18, 19, 30, 33, 38, 46, ԺԵ, 12, 30 և այլն):

4. Թարգմանչի կողմից ավելացված բառեր (Ա Մակ. Ա, 19, 35, Բ, 36, 37, Գ, 2, 17, 28, 43, Դ, 35, 36, 38, Ե, 23, 33, 34, Զ, 33, 38, 42, Է, 30, 34, 35, Ը, 20, Թ, 7, 28, 47, Ժ, 52, 55, 64, ԺԱ, 49, ԺԳ, 5, 22, ԺԴ, 18, ԺԶ, 8, Բ Մակ. Ա, 21, 30, Բ, 1, 30, Գ, 9, 17, 20, 21, 28, 29, 37, 38, Դ, 1, 2, 3, 10, 11, 19, 29, 32, Ե, 1, 5, 6, 10, 13, 14, 15, 22, Զ, 24, 31, Է, 3, 4, 6, 9, 14, 16, 29, 32, 39, Ը, 21, 24, 25, 28, 34, Թ, 1, 10, 15, Ժ, 11, 12, 26, ԺԱ, 12, 15, 38, ԺԲ, 29, ԺԳ, 13, 19, 28, ԺԴ, 11, 21, 44, 48, ԺԵ, 2, 10 և այլն):

5. Բաց թողնված, չթարգմանված բառեր և բառակապակցություններ (Ա Մակ. Գ, 48, Զ, 5, 35, 39, ԺԲ, 49, ԺԴ, 28, ԺԵ, 6, 37, ԺԶ, 11, Բ Մակ. Ա, 1, 7, 15, Բ, 8, 25, 36, Դ, 21, 24, 30, Ե, 5, 9, Զ, 3, 11, 13, 16, 21, 22, 25, Է, 1, 6, 24, 32, 33, Ը, 6, 8, 9, 13, 35, Թ, 3, 7, 8, 19, 25, 26, Ժ, 11, 17, ԺԱ, 25, ԺԲ, 10, 16, 22, 25, 45, ԺԳ, 8, 26, ԺԴ, 9, 11, 27, ԺԵ, 9, 10, 13, 19, 26 և այլն):

6. Աղճատումներ, շփոթումներ, թյուրիմացություններ, անհետևողական թարգմանություններ (Ա Մակ. Ա, 24, 35, Բ, 5, 26, Գ, 13, 45, Դ, 18, 48,

Ե, 5, 26, 28, Զ, 20, 43, Է, 5, Ը, 7, Թ, 28, 33, 50, Ժ, 4, 82, ԺԱ, 67, ԺԲ, 37, 45, ԺԳ, 23, ԺԴ, 22, ԺԵ, 22, 23, ԺԶ, 15, Բ Մակ. Ա, 3, 4, 5, 11, 13, 21, 22, Բ, 1, 13, 20, 21, 23, 25, 27, 29, Գ, 1, 6, 14, 19, 25, 28, 30, 39, Դ, 4, 9, 11, 19, 21, 23, 34, 35, 38, Ե, 14, 16, 21, 24, Զ, 30, Է, 8, 11, Ը, 1, 2, 30, 31, 32, Թ, 4, 12, 16, 21, 22, 25, 33, Ժ, 10, 12, 15, 23, 30, ԺԱ, 9, 11, 14, 15, 29, 30, ԺԲ, 10, 13, 17, 24, 26, 35, 37, 38, 43, ԺԳ, 3, 5, 18, 22, 24, ԺԴ, 5, 15, 25, 30, 38, 39, 44, ԺԵ, 2, 37 և այլն):

7. Կրկնություններ, գրչագրական սխալներ և այլ թերություններ (Ա Մակ. Բ, 1, Ե, 9, Զ, 1, Թ, 4, ԺԱ, 70, ԺԳ, 13, ԺԵ, 22, 23, ԺԶ, 15, Բ Մակ. Գ, 19, 23, Է, 21, ԺԲ, 38 և այլն):

Վերոնշյալ լեզվաոճական երևույթները, որ պայմանավորված են զանազան պատճառներով, արդյունք են նախ թարգմանչի՝ իր կատարած աշխատանքի վերաբերյալ ունեցած հայացքի ու վերաբերմունքի, ապա՝ հետագա սրբագրումների ու գրչագրական հանգամանքների:

Թարգմանության թերություններ համարվող երևույթների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Մակաբայեցվոց գրքի հայ թարգմանիչը իր անփորձությամբ և հունարենի իմացության որոշ թուլություններով հանդերձ, պնդումներն ապահովելու համար հունարենագետ չէ, ինչպես կարծում են բանասերներից ոմանք: Ընդհակառակը նա տիրապետել է հունարենին և ժամանակի թարգմանական արվեստին: Եվ այն սխալներն ու անճշտությունները, որոնք տեղ են գտել Մակաբայեցվոց մեզ հասած բնագրում, հիմնականում կապված են թարգմանչի ձեռքի տակ եղած բնօրինակի հետ, մասամբ էլ արդյունք են հետագա թյուրըմբերումների: Այդ են հաստատում լեզվական միևնույն երևույթների տարածների առկայությունը ձեռագրերում. շատ գրչագրեր տալիս են միանգամայն ճիշտ, հունարենին համապատասխան ըմբերցվածներ, որոնք ճիշտ չեն ուրիշ գրչագրերում: Ինչ վերաբերում է ոճին, ապա թարգմանիչը, իրոք, լավ հայկաբան լինելով՝ առատորեն օգտագործել է գրաբարի լեզվական միջոցները՝ պատումն առավել կենդանի, պատկերավոր, գունագեղ ու արտահայտիչ դարձնելու համար, պահպանելով բնօրինակի բովանդակության, մտքերի ու իմաստների ճշտությունը: Մակաբայեցվոց և Աստվածաշնչի մյուս գրքերի թարգմանությունների տարբերությունը ոչ այնքան սխալների ու շեղումների մեջ է կապված, որքան հեղինակի յուրօրինակ, ինքնուրույն ու համարձակ մոտեցումով ստեղծված, սովորականից տարբեր լեզվաոճական կերտվածք ունեցող շարադրանքի մեջ: Սակայն նրա շարադրանքը, գրելաոճին համապատասխան՝ միապաղաղ չէ և որտեղ անհրաժեշտ չի եղել՝ նա թարգմանել է սովորական ձևով՝ բնագրին խիստ համապատասխան, բառ առ բառ, երբեմն «ստրկական հետևողությամբ»:

Մակաբայեցվոց հայ թարգմանչի ու նրա կատարած թարգմանության համատեղ, բայց բավականին

նիշտ ու ամբողջական բնութագիրը տրված է Ե. Դուրյանի աշխատության սկզբում: Ավելորդ չենք համարում բերել ադ հատվածն ամբողջությամբ. «Աստուածաշունչի հայերեն թարգմանության մեջ միակ թարգմանիչը, որ բնագրին հանդէպ լեզուի ու բացատրության անկախ կիրարկում մը ի գործ դրած է, Մակաբայեցոց գիրքերու թարգմանիչն է ան: Պատճառ մը չունինք կասկածելու, թէ պատմական այդ գիրքերու երկրորդականում հանգամանք մը ունենալը համարձակեցուցած ըլլայ թարգմանիչը այդպէս վարուելու իր բնագրին հետ. վասնզի նոյն կարգի պատկանող ուրիշ գրուածներու թարգմանութիւնները պատշաճութենէն չեն շեղած բնաւ: Ինքնին կրնայ իմացուիլ ուրեմն որ Մակաբայեցոց թարգմանիչը իրեն սեփական ոճին ուզած է հետևիլ և ոչ բնագրին՝ զոր ունէր իր առջև: Ըստ այսմ կը սիրէ աճեցնել պարբերութիւնները, շատ անգամ համանիշներու կուտակում մը թաւալելով, մերթ ան-

հասկանալի ու կեղակարծօրէն հայեցի դարձուածներ յերիւրելով, ու տեղ տեղ ալ բանաստեղծական բացատրութիւններու ծաղիկներ ցանկնով: Կարծես անպատասխանատու հեղինակութեամբ մը կը շարժէ իր գրիչը, ու բառերն իբրև գոյներ գործածելով՝ աւելի կը նկարէ քան կը գրէ: Ս. Մեսրոպեան դպրոցի կարևորագոյն դէմքերէն մին նկատուած է ան ո՛չ իբրև խղճամիտ թարգմանիչ մը, այլ իբրև մէկը՝ որ կ'ուզէ ու կրնայ իր լեզուական հակումներուն մախապատութիւն մը տալու խիզախութեամբ յառաջանալ, և որուն աչքին գուցէ գեղջուկ ելլէր Թագաւորաց գիրքերու թարգմանութիւնն ան-աւամ՝ իր այնքան սեղմ գեղեցկութեանն ու արուեստին մէջ»<sup>30</sup>:

(Ծարումակելի)

<sup>30</sup> Եղիշե արքեպ. Դուրյան, նշվ. աշխ., էջ 829:

